ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԴԱՊ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք.Դիլիջան

25 օգոստոսի 2017թ.
ժամը 11 ^{00}

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝
Հ.Հարությունյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ**

Հանձնաժողովի անդամներ՝
Լ.Աբազյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի իրավաբան**

Ռ.Բեգլարյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի օգնական**

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Դիլանյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ-տնտեսագետ**

1. **«ԴԱՊ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նիստի.**
(Հ. Հարությունյան)

1.1 Հաշվի առնելով «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից շենքերի չափագրման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված «ԴԱՊ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 22.08.2017թ.-ին հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ նշված ծածկագրով մրցույթի 1-ին մասնակից «Է.Ապրեսյան» ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ որոշմամբ սահմանված ժամետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է դրական եզրակացություն: Համաձայն 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ որոշման «Է.Ապրեսյան» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած տվյալները համարվում են իրականությանը համապատասխանող:

2. **Հանձնաժողովը որոշեց՝**

2.1 «Է.Ապրեսյան» ՍՊԸ-ին հաղթող ճանաչել և ընկերությանը ներկայացնել շենքերի չափագրման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման առաջարկ:

2.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, սահմանավում է 5 (հինգ) օրացույցային օր անգործության ժամկետ:

3. **Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:**

Հանձնաժողովի նախագահ՝

Հ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝

Լ.Աբազյան

Ռ.Բեգլարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան